

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն 3, 2014

Геология и география

Աշխարհագրություն

УДК 528.935

**ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՀԱՍԱՐ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՏԵՂՋՄԱՆ ԱՎՏՈՍԱՏԱՑՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ
ՕԳՆՈՒԹՅԱՄԲ**

Ա. Ա. ԱՏԵՓԱՆՅԱՆ*, Հ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԿԱՌԴԿՄԿ, “ԳԵՈՂԵԳԻԱՅԻ և քարտեզագրության” ՊՈԱԿ, Հայաստան

Հոդվածում ներկայացված է քարտեզների և հատակագծերի մակագրությունների ստեղծման ավտոմատացումը ծրագրային մոդուլների օգտագործմամբ: Այս եղանակով ստացված մակագրությունները հճարավորություն կուն քարտեզավել քարտեզների ստեղծման աշխատանքները, և դրանք իրականացնել որակապես նոր մակարդակով:

Keywords: labeling, maps, application module, spatial object, scale.

Ներածություն: Քարտեզների և հատակագծերի ստեղծումն ունի հինգ պատճենություն, որոշ դիտարկումներով այն ավելի հին է, քան զրերը: Անգ հասած տեղանքի ամենահին պատկերը կազմվել է մ.թ.ա 4000 թվականից վաղ, դա ներկայիս Իրաքի տարածքում գտնվող Ազով քաղաքի ոսկե թիթեղն է, որում պատկերված է բերդի և քաղաքի հատակագիծը [1]: Քարտեզներում անցկացված մակագրությունները զարգացման հետ մեկտեր փոփոխվել են: Նախկինում քարտեզագրությունների կողմից մակագրությունների տեղադրումը քարտեզներում քարդ և դժվար աշխատանք էր՝ հաշվի առնելով, որ այն հիմնականում ձեռքով էր արվում:

Ընդհանուր առմամբ քարտեզներում կամ հատակագծերում մակագրություններ ստեղծելը մի գործընթաց է, որտեղ նկարագրողական տեղեկատվությունը տեղադրվում է տարածական օբյեկտի վրա կամ նրա կողքին [2]: Մակագրությունը տեքստի հատված է, որը տեղադրվում է քարտեզի վրա, այն դիմամիկ է և արտապատկերվող, ստեղծվում է մեկ կամ մի քանի տվյալների քազաներից: Անփոփելով կարելի է ասել, որ մակագրությունը ցանկացած տեքստն է, որն օգնում է նույնականացնել օբյեկտը և ավելի լավ հասկանալ քարտեզի պարունակությունը:

Խնդրի դրվածքը: Մակագրությունների բանաձևերի և ծրագրային մոդուլի ստեղծման համար այսօր օգտագործվում է՝ երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման բնագավառում լայն տարածում ունեցող՝ ArcGis ծրագիրը:

Դիտարկենք մակագրությունների ստեղծման երկու տարրերակ՝

1. մակագրությունների դասեր (Label Classes) գործիքի օգնությամբ;

2. դաշտի հաշվարկը (Calculate field) և կրճատումների բառարան (Abbreviation dictionary) ծրագրային գործիքներով:


* E-mail: steparam@gmail.com

Ամեն տարբերակի համար ընտրել ենք մեկական շերտ, որի համար պետք է ստեղծենք մակագրություն:

Առաջին տարբերակի համար օգտագործել ենք “Բուսականություն Կ” շերտը: Այն իր տեսակով կետային շերտ է, անտառի բնութագրիչ և նկարագրում է անտառում ծառի տեսակը, միջին բարձրությունը, բնի հաստությունը և հեռավորությունը միմյանցից:

Երկրորդ տարբերակի համար՝ “Շենք շինություն Մ” շերտը: Այն մակերեսային տեսակի շերտ է և նկարագրում է շենքերի տեսակը, գործառույթային նշանակությունը, հարկայնությունն ու անվանումը:

Փուլ 1: Նկար 1-ում ստեղծված են պայմանական նշաններ մակագրությունների համար, որոնք իրենց մեջ պարունակում են տառատեսակի անվանումները, ցուցիչները, չափը և գույնը:



Նկ. 1:

Փուլ 2: Նկար 2-ում արտապատկերված է ստեղծված տվյալների բազան, որը բերված է աշխատանքային տեսքի:


Ընկանառություններ								
OBJECTID *	SHAPE *	Տեսակ	Տունկիթեան նշանակ	Հարկայն	Բարձրություն	Նյութ	Փողոց	
5102	Polygon	Ոչ բնակելի	Անայն	1	3	Սեռոտ	<Null>	
5103	Polygon	Ոչ բնակելի	Անայն	1	3	Սեռոտ	<Null>	
5104	Polygon	Ոչ բնակելի	Անայն	1	3	Սեռոտ	<Null>	
5106	Polygon	Բնակելի	Բնակելի տուն	1	3	Փայտ	<Null>	
5107	Polygon	Բնակելի	Բնակելի տուն	2	6	Բայր	<Null>	
5109	Polygon	Ոչ բնակելի	Խաժկարան-հովանելո	<Null>	<Null>	<Null>	<Null>	
5110	Polygon	Բնակելի	Բնակելի տուն	1	3	Բայր	<Null>	

Բնականություններ								
OBJECTID	Տեսակ	Բարձրություն (մ)	Միջին տրամագիծ (մ)	Էլեավորություն (մ)	Անվանու	Անվանու	Անվանու	Անվանու
1	Պողոսոտ	5	0.2	6	Երկանի			
5	Ստուպամակոր	11	0.3	<Null>	Սոսի			
6	Պողոսոտ	6	0.2	5	Խմելենի			
9	Պողոսոտ	5	0.2	3	Տանձենի			
11	Ստուպամակոր	18	0.3	<Null>	Բայրի			
12	Ստուպամակոր	15	0.4	<Null>	Թորի			
13	Պողոսոտ	4	0.2	6	Խմելենի			


Նկ. 2:

Առաջին և երկրորդ փուլերը կիրառվում են երկու շերտերի համար: Երրորդ փուլի աշխատանքների նկարագրությունը կբաժանենք 2 մասի, քանի որ այստեղ կիրառվում են տարբեր գործիքներ և բանաձևեր:


Մաս 1 “Բուսականություն Կ”: Օգտվելով երկու փուլերի արդյունքից ստացվում է շերտի հետևյալ տեսքը (նկ. 3), որը սակայն չի բավարարում քարտեզագրությունում ժամանակակից շափանիշներին:



արտահայտման պատուհանում ստեղծվում է քանակը (նկ. 4) օգտագործելով VBScript ծրագրավորման սկրիպտային լեզուն, որով սահմանվում է տվյալների արտապատկերման ձևը քարտեզի վրա:




Նկ. 4:



Նկ. 5:

Նկար 5-ում պատկերված է քարտեզի վրա արտապատկերվող վերջնական արդյունքը և մակագրության շերտը տվյալների բազայում:

Սաս 2 “Ծեմպ-շինություն Մ”: Այս տարրերակի համար ստեղծվում է նոր սյունակ, որում հաշվարկել դաշտը (Calculate field) գործիքի օգնությամբ ստեղծվում է մակագրությունների կրճատումների բանաձև (նկ. 6):




Նկ. 6:

Կրճատումների բառարանն աշխատանքային տարածք է (նկ. 7), որտեղ սահմանվում են տվյալների բազայի տվյալների կրճատ ձևերը, օրինակ՝ տվյալների բազայում հանդիպելով “Ավտոմատ հեռախոսակայան” բառախմբին գործիքն արտապատկերում է “ԱՏՀ”: Կիրառելով կրճատումների բառարան (Abbreviation dictionary) գործիքը՝ ամբողջացվում են մակագրությունների ստեղծման աշխատանքները:

Մակագրությունների վերջնական արտապատկերման տեսքը ֆիքսվում է շերտի պարամետրերի մեջ՝ կիրառելով հետևյալ հրահանգները՝

- արտապատկերում տարածական օբյեկտի նկատմամբ;
- արտապատկերում մակերևույթային օբյեկտի ներսում;
- արտապատկերում ըստ օբյեկտի անկյան ուղղության;
- օբյեկտի չափերի նկատմամբ մակագրության համամասնական արտապատկերում;
- առաջնահերթության սահմանում ըստ արտապատկերման գործընթացի;
- տարբեր մասշտաբների նկատմամբ արտապատկերման սահմանում և այլն:

Թվարկված աշխատանքներից հետո կոնֆենանք մակագրություններ (նկ. 8), որոնք վերջում արտահանվելու են որպես մակագրությունների առանձին շերտի



Նկ. 7:

անոտացիա: Վերջինս օժտված է քարտեզում մակագրությունների կառավարման դիմամիկ հատկանիշներով՝

- տարածական օբյեկտը տեղափոխելիս՝ կտեղափոխվի նաև մակագրությունը;
- տարածական օբյեկտը հեռացնելիս՝ կհեռացվի նաև իր հետ կապված մակագրությունը;
- տվյալների փոփոխման դեպքում՝ մակագրությունների ավտոմատ փոփոխում:



Նկ. 8:

Այսպիսով, անոտացիայի ստեղծման գործողությամբ ավարտվում է մակագրությունների ստեղծման աշխատանքների գործնարարը:

Անփոփում: Օգտագործելով ծրագրային մոդուլում ստեղծված մակագրությունների բանաձևերը կունենանք՝

1. քարտեզների կամ հատակագծերի ստեղծման համար նախատեսված ժամանակի էական կրճատում;
2. մակագրությունների և տվյալների բազայում առկա տեքստային տեղեկատվության բացարձակ համընկնում (ինչը բացակայում էր նախկինում);
3. միասնական քարտեզագրական հիմքի ձևավորման համար անհրաժեշտ գործիք;
4. մակագրությունների դիմամիկ արտապատկերման հնարավորություն;
5. մաշտարային շարքի քարտեզների համար միասնական ընդհանուր մակագրությունների ստեղծում;
6. քարտեզագրության մեջ նոր մակարդակի աշխատելառ;
7. քարտեզների տվյալների հետ աշխատանքի մեխանիզմների պարզեցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://super-map.ru/ot-mestnosti-k-karte/istoriya-vozniknoveniya-kartografii.html>
2. <http://resources.arcgis.com/ru/help/main/10.1/index.html#/na/00s80000000t000000/>

А. М. СТЕПАНЯН, А. А. АКОПЯН

**АВТОМАТИЗАЦИЯ СОЗДАНИЯ НАДПИСЕЙ НА КАРТАХ И ПЛАНАХ
С ПОМОЩЬЮ ПРОГРАММНЫХ МОДУЛЕЙ**

Резюме

В статье представлена автоматизация создания надписей на картах и планах с помощью программных модулей. Надписи, созданные по этому методу, приведут к улучшению картографических работ и позволяют проводить их на новом уровне.

A. S. STEPANYAN, H. A. HAKOBYAN

**AUTOMATION OF CREATION OF LABELING ON MAPS
AND PLANS VIA APPLICATION MODULES**

Summary

The article presents the automation of creation of labeling of maps and plans via application modules. This method of generating labeling will give an opportunity to improve the quality of mapping, and upgrade it to a new level.